



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2018-06.04/279
06.04.2018թ.


ՀՀ Լոռու մարզպետ
Արթուր Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ,

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել Լեւոնոստովո համայնքի բնակիչ և հայտնել, որ մի խումբ անձիք, որոնք չեն ներկայացել, թե ո՞ր կազմակերպությունից կամ պետական կառույցից են, ցանկանում են վերցնել համայնքի բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը՝ դրանց վրա գտնվող բնակելի տներով: Այդ նույն անձիք հայտնել են, որ իրենց հողամասերը բնակելի տներով վերցնելու նպատակը սպորտային համալիր կառուցելն է, իսկ տարածքն ազատելու համար տրամադրում են մեկ տարի ժամանակ, միաժամանակ դրա դիմաց առաջարկելով որոշակի փոխհատուցման գումար: Համայնքի բնակիչը հայտնել է, որ իրենք չեն ցանկանում ընդունել իրենց հողամասերը բնակելի տներով հանդերձ գումարի դիմաց փոխանակելու առաջարկը, չնայած այն հանգամանքին, որ նման առաջարկ ներկայացնողները համայնքի բնակիչներին հայտնել են, որ իրենց կարծիքը հաշվի չի առնվելու:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դրույթները խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե՛

1. Արդյո՞ք Լեւոնոստովո համայնքում նախատեսվում է կառուցել սպորտային համալիր կամ որևէ այլ կառույց,
2. Եթե այո, ապա առկա է արդյո՞ք նախագիծ (նախագծի առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել դրա պատճենը),
3. Եթե նախատեսվում է կառուցել սպորտային համալիր կամ որևէ այլ կառույց, ապա ո՞ր իրավական ակտի հիման վրա (խնդրում եմ մատնանշել համապատասխան իրավական ակտը)
4. Եթե նախատեսվում է կառուցել սպորտային համալիր կամ որևէ այլ կառույց, ապա արդյո՞ք այն իր մեջ ընդգրկելու է Լեւոնոստովո համայնքի որոշ բնակիչների՝ վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող



հողամասերը՝ դրանց վրա գտնվող բնակելի տներով, եթե ընդգրկելու է, ապա արդյո՞ք սահմանված են փոխհատուցման տրամադրման ձևերն ու կարգը,

5. Եթե նախատեսվում է կառուցել սպորտային համալիր կամ որևէ այլ կառույց, ապա ո՞ր կազմակերպությունը կամ պետական կառույցն է այն իրականացանում:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, էլեկտրոն վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
Կազմակերպության նախագահ՝

Կատարող՝ Ն. Հակոբյան
Էլ. հասցե՝ hhakobyan@hcav.am
Հեռ.՝ 094042268



Արթուր Սաքունց



Ա. Մաքրունց
 Հելլենիկյան Քարաքաղցիական Ասամբլեայի Վանաձորի
 գրասենյակի նախագահ
 Տիգրան Մեծ 59
 2021, ք. Վանաձոր



R



Ա. Նալբանդյան
 ՀՀ Լոռու մարզպետ
 Հայքի հրապարակ,
 2001,
 ք. Վանաձոր, Հայաստան